ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 328 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N 483-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 02269952) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի օգոստոսի 5-ի «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի 2800-ամյակի այգու տարածքի սպասարկում և խնամքի իրականացում» ծրագրի մասին» N 483-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱԷՍ Սիսթեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02637219) 2024 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ N ՎԸ-019/2024 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շատրվանների ձայնասփռումն ապահովելու համար նախատեսված բարձրախոսների (10 հատ) ձեռքբերում՝ 8,856,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱԷՍ Սիսթեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02637219) 2024 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ N ՎԸ-020/2024 պայմանագրում

նշված գործարքը, որով նախատեսվում է շատրվանների ձայնասփռումն ապահովելու համար նախատեսված սարքավորումների և պարագայի ձեռքբերում՝ 2,290,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

14.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ